4.6 Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրն իրավունք ունի ներկայացնելու ապահովագրական գումարի ավելացման դիմում (նոր կառուցված կամ հիմնական պայմանագրում չընդգրկված շինությունների (կառույցների) ապահովագրություն, տնային գույքի գծով ապահովագրական գումարի ավելացում, ապահովագրական հատուցման վճարումից հետո ապահովագրական գումարի ավելացում) ապահովագրության օբյեկտների իրական (ապահովագրական) արժեքի սահմաններում: Ընդ որում՝ կնքվում է լրացուցիչ Պայմանագիր/Վկայագիր՝ հիմնական Պայմանագրի/Վկայագրի գործողության ավարտին մնացած ժամկետով: Հիմնական և լրացուցիչ Պայմանագրերով/Վկայագրերով ընդհանուր ապահովագրական գումարը չպետք է գերազանցի ապահովագրության օբյեկտների իրական (ապահովագրական) արժեքը:

4.7 Քաղաքացիական պատասխանատվության գծով ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագիր/Վկայագիր կնքելիս ապահովագրական գումարը կարող է սահմանվել՝

4.7.1 այլ անձանց կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար,

4.7.2 այլ անձանց գույքին վնաս պատճառելու համար,

4.7.3 այլ անձանց գույքին, կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար:

4.8 Ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով: Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ Պայմանագրում/Վկայագրում ապահովագրական գումարները կարող են նշվել արտարժույթով, որոնց համարժեք են ՀՀ դրամով համապատասխան գումարներ (այսուհետ՝ ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրություն):

4.9 Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսված լինել ապահովագրական հատուցման առավելագույն չափ՝ մեկ ապահովագրական պատահարի, մեկ ապահովագրական դիսկի, մեկ օբյեկտի, ինչպես նաև մեկ անձի կյանքին կամ առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի գծով:

4.10 Ապակյա, ձենապակյա և այլ կոտրվող իրերի յուրաքանչյուր կտորի գծով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

4.11 Նկարների, բացառիկ և անտիկվարային առարկաների, թանկարժեք մետաղներից իրերի, թանկարժեք, կիսաթանկարժեք և արհեստական քարերից իրերի յուրաքանչյուր կտորի գծով ապահովագրական գումարը չի կարող գերազանցել 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

4.12 Ապահովագրական գումարը տվյալ օբյեկտի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է կատարված հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալուց հետո չի վերականգնել այն: Յուրաքանչյուր հաջորդ

4.5 По соглашению Страхователя и Страховщика страховая сумма может устанавливаться как единой суммой по группе объектов страхования, одному объекту страхования, так и отдельной суммой по элементам (предметам) объекта страхования.

4.6 В период действия Договора/Полиса Страхователь вправе подать заявление на увеличение страховой суммы (страхование вновь возведенных или не включенных в основной договор строений (построек), увеличение страховой суммы по домашнему имуществу, увеличение страховой суммы после осуществления страховой выплаты) в пределах действительной стоимости объектов страхования. При этом заключается дополнительный Договор/Полис на срок, оставшийся до окончания действия основного Договора/Полиса. Общая страховая сумма по основному и дополнительному Договорам/Полисам не должна превышать действительной (страховой) стоимости объектов страхования.

4.7 Страховая сумма по страхованию гражданской ответственности устанавливается по соглашению сторон. При заключении Договора/Полиса страховая сумма может быть установлена:

4.7.1 за причинение вреда жизни и здоровью других лиц;

4.7.2 за причинение вреда имуществу других лиц;

4.7.3 за причинение вреда имуществу, жизни и здоровью других лиц.

4.8 Страховая сумма устанавливается в армянских драмах. По соглашению Страхователя и Страховщика в Договоре/Полисе могут быть указаны страховые суммы в иностранной валюте, эквивалентом которых являются соответствующие суммы в драмах (далее – страхование в драмовом эквиваленте иностранной валюты).

4.9 Договором/Полисом может быть предусмотрен предельный размер страховой выплаты: по одному страховому случаю, по одному страховому риску, по одному объекту, а также за вред, причинённый жизни или здоровью и/или имуществу одного лица.

4.10 Страховая сумма по каждому куску стеклянных, хрустальных и иных ломких изделий не может превышать 300,000 (трехсот тысяч) армянских драмов, если иное не предусмотрено Договором/Полисом.

4.11 Страховая сумма по каждому куску картин, уникальных и антикварных предметов, изделий из драгоценных металлов, драгоценных, полудрагоценных и поделочных камней не может превышать 300 (трехсот тысяч) армянских драмов, если иное не предусмотрено Договором/Полисом.

4.12 После выплаты страхового возмещения страховая сумма по данному объекту уменьшается на величину произведенной выплаты, если иное не предусмотрено Договором/Полисом или Страхователь после получения страховой выплаты не восстановил страховую сумму. Каждая дальнейшая страховая выплата производится



հատուցումն իրականացվում է վնասի չափի նկատմամբ նվազած ապահովագրական գումարի և Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի հարաբերության չափով համամասնությունն կիրառելով:

пропорционально отношению уменьшенной по отношению к размеру убытка страховой суммы к установленной в Договоре/Полисе страховой сумме.

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5. СРОК СТРАХОВАНИЯ

5.1 Պայմանագիրը/Վկայագիրը (հիմնական) կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

5.1 Договор/Полис (основной) заключается сроком на один год, если иное не предусмотрено Договором/Полисом.

5.2 Պայմանագրի/Վկայագրի գործողության սկիզբը և ավարտը սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:

5.2 Срок действия Договора/Полиса устанавливается Договором/Полисом.

5.3 Պայմանագիրը/Վկայագիրն (հիմնական և լրացուցիչ) ուժի մեջ է մտնում Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից, եթե դրանով այլ բան նախատեսված չէ:

5.3 Договора/Полис (основной и дополнительный) вступает в силу с момента его подписания, если в нём не предусмотрено иное.

5.4 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է՝

5.4 Срок действия Договора/Полиса заканчивается:

5.4.1 հիմնական պայմանագրի՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի վերջին օրվա ժամը 23:59-ին, կամ այն լրիվ տարիների, ամիսների և օրերի վերջին օրվա ժամը 23:59-ին, որոնց ժամկետով կնքվել էր ապահովագրության պայմանագիրը,

5.4.1 основного – в 23:59 часа последнего дня срока действия Договора/Полиса, либо в 23:59 часа последнего дня из столько полных лет, месяцев и дней, на сколько заключён Договор/Полис;

5.4.2 լրացուցիչ պայմանագրի՝ հիմնական Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի հետ միաժամանակ:

5.4.2 дополнительного – одновременно с окончанием действия основного Договора/Полиса.

5.5 Մինչև նախորդ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտը նոր ժամկետով Պայմանագիր/Վկայագիր կնքելու դեպքում, նոր (վերակնքված) Պայմանագիրն/Վկայագիրն ուժի մեջ է մտնում նախորդ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտի պահից:

5.5 При заключении Договора/Полиса на новый срок до истечения действия предыдущего Договора/Полиса, новый (возобновлённый) Договор/Полис вступает в силу с момента окончания действия предыдущего Договора/Полиса.

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՇԵՐԹԱԿԱՆ ՍՄՍԻ ՍՆՆՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6. ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ СТРАХОВОГО ТАРИФА, СТРАХОВОЙ ПРЕМИИ, СТРАХОВОГО ВЗНОСА

6.1 Ապահովագրական սակագինը հանդիսանում է ապահովագրավճարի դրույքաչափ՝ ստացված ապահովագրական գումարի միավորից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը: Ապահովագրական սակագինն արտահայտվում է տոկոսներով կամ ՀՀ դրամով՝ ապահովագրական գումարի 100 ՀՀ դրամից:

6.1 Страховой тариф является ставкой страховой премии с единицы страховой суммы с учётом объекта страхования и характера страхового риска. Страховой тариф выражается в процентах или в армянских драмах со 100 драмов страховой суммы.

6.2 Ապահովագրական սակագնի կոնկրետ չափը սահմանվում է Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրության համաձայնեցված պայմանների գծով պարտականությունների ծավալից, ապահովագրության ժամկետից, ապահովագրավճարի վճարման կարգից, ապահովագրության օբյեկտի գտնվելու վայրից, տեսակից և այլ գործոններից, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

6.2 Конкретный размер страхового тарифа устанавливается Страховщиком в Договоре/Полисе, исходя из объёма обязательств по согласованным условиям страхования, срока страхования, порядка уплаты страховой премии, места нахождения, вида объекта страхования и иных факторов, оказывающих влияние на степень страхового риска.

6.3 Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողը ապահովագրության ամբողջ ժամկետի համար՝ ելնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնի չափից:

6.3 Страховая премия исчисляется Страховщиком за весь срок страхования, исходя из страховой суммы по Договору/Полису и размера страхового тарифа.

6.4 Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրավճարը վճարվում է Ապահովագրի կողմից միանվագ,

6.4 Страховая премия по Договору/Полису уплачивается Страхователем одновременно за весь период



ապահովագրության ամբողջ ժամկետի համար, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.5 Ապահովադիրը կարող է ապահովագրավճարը վճարել կանխիկ դրամով Ապահովագրողի դրամարկղ, Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին կամ անկանխիկ՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելով: Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:

6.6 Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադիր կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար և չծանուցել այդ մասին Ապահովադիրին: Ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չսահմանելու և այդ մասին Ապահովադիրին չծանուցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ:

6.7 Ապահովագրավճարը կարող է վճարվել ապահովագրության օբյեկտի նկատմամբ որևէ իրավունք չունեցող անձի կողմից: Ընդ որում՝ տվյալ անձը Պայմանագրի/Վկայագրի գծով պարտականություններ չի ստանձնում և իրավունքներ ձեռք չի բերում:

6.8 ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ/ՎԿԱՅԱԳԻՐԸ, ԱՅՆ ԿՆՔԵԼՈՒԻ, ԿԱՏԱՐԵԼՈՒԻ, ԼՈՒԾԵԼՈՒԻ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

7.1 Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է Ապահովագրողի կողմից գրավոր ձևով Ապահովադիրի բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

7.2 Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի/Վկայագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի (ապահովագրավճարի) դիմաց, Պայմանագրում/Վկայագրում նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրին (Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

7.3 Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրության օբյեկտի զննում: Զննում իրականացնելու ընթացքում Ապահովադիրի ներկայությամբ ստուգվում է ապահովագրության օբյեկտների

страхования, если иное не предусмотрено Договором/Полисом.

6.5 Страховая премия может быть уплачена Страхователем наличными деньгами в кассу Страховщика, уполномоченному представителю Страховщика или безналичным путём на расчётный счёт Страховщика. Датой уплаты страховой премии (страхового взноса) считается день уплаты страховой премии (страхового взноса) в кассу Страховщика либо уполномоченному представителю Страховщика или день поступления страховой премии (страхового взноса) на расчётный счёт Страховщика.

6.6 В случае неуплаты Страхователем страховой премии (страхового взноса) в установленные Договором/Полисом сроки и размере, Страховщик имеет право не устанавливая дополнительный срок для уплаты страховой премии и не уведомлять об этом Страхователя. В случае неустановления дополнительного срока для уплаты страховой премии и неуведомления Страхователя об этом Страховщик имеет право отказа в выплате по ущербу, наступившему в результате событий, произошедших после 00-00 часов дня, следующего за днём, указанным в Договоре/Полисе, как дата уплаты страхового взноса.

6.7 Страховую премию может уплатить лицо, не имеющее прав в отношении объекта страхования. При этом данное лицо не принимает обязательств и не приобретает прав по Договору/Полису.

6.8 При страховании в драмовом эквиваленте иностранной валюты страховая премия уплачивается в драмах, если иное не предусмотрено Договором/Полисом, по курсу Центрального банка РА на день заключения Договора/Полиса.

7. ДОГОВОР/ПОЛИС. ПОРЯДОК ЕГО ЗАКЛЮЧЕНИЯ, ИСПОЛНЕНИЯ, ПРЕКРАЩЕНИЯ, ВНЕСЕНИЯ В НЕГО ИЗМЕНЕНИЙ И ДОПОЛНЕНИЙ

7.1 Договор/Полис заключается Страховщиком в письменной форме на основании устного или письменного заявления Страхователя.

7.2 По Договору/Полису, заключённому на условиях настоящих Правил, Страховщик обязуется за обусловленную Договором/Полисом плату (страховую премию) при наступлении предусмотренного в Договоре/Полисе страхового случая в отношении застрахованного объекта, произвести Страхователю (Выгодоприобретателю) страховую выплату в пределах определённой Договором/Полисом страховой суммы.

7.3 При заключении Договора/Полиса Страховщик имеет право произвести осмотр объекта страхования. При осмотре в присутствии Страхователя проверяется наличие объектов страхования, а также наличие факторов,



առկայությունը, ինչպես նաև այն գործոնների առկայությունը, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի աստիճանի վրա:

7.4 Ապահովադրի ցանկությամբ կարող են ապահովագրվել Ապահովադրին և նրա ընտանիքի անդամներին պատկանող բոլոր ապահովագրության օբյեկտները կամ ապահովագրության օբյեկտների խմբեր կամ առանձին ապահովագրության օբյեկտներ:

7.5 Ընտանիքի անդամ են ճանաչվում ամուսինը, կինը, ծնողները, երեխաները և օրենսդրությամբ նախատեսված անձնական ոչ գույքային կամ գույքային հարաբերություններ ունեցող այլ անձինք (նույն հասցեում համատեղ բնակվող, ընդհանուր տնտեսություն, ընտանիքի ընդհանուր բյուջե վարող, համատեղ սնվող, տնային պարագաներից և կենցաղային իրերից համատեղ օգտվող, դրանց ձեռքբերմանը համատեղ մասնակցություն ունեցող անձինք):

7.6 Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ կարող է սահմանվել չհատուցվող գումար` վնասի չափ, որի հատուցման պարտավորությունը կրում է Ապահովադիրը: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով`

7.6.1 ոչ պայմանական (նվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում փոխհատուցվող վնասը բոլոր դեպքերում նվազեցվում է չհատուցվող գումարի չափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում,

7.6.2 պայմանական (չնվազեցվող) չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասի հատուցման համար, սակայն հատուցում է վնասն ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

7.7 Շինության (բնակարանի) ներքին հարդարանքի և ինժեներական սարքավորումների, տնային կամ այլ գույքի Պայմանագիրը/Վկայագիրը կողմերի համաձայնությամբ կարող է կնքվել պայմանով, որ դրամական արտահայտությամբ ապահովագրական հատուցումը փոխարինվի ապահովագրական գումարի սահմաններում կորցրած գույքին համարժեք գույքի տրամադրմամբ:

7.8 Պայմանագիրը/Վկայագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում`

7.8.1 Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի (Շահառուի) նկատմամբ Ապահովագրողի կողմից պարտավորությունների լրիվ ծավալով կատարման,

7.8.2 եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով:

7.8.3 Ապահովագրողի լուծարման կամ նրա լիցենզիայի դադարեցման,

7.8.4 Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան կամ իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման,

7.8.5 ՀՀ օրենսդրությամբ կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ դեպքերում:

7.9 Պայմանագիրը/Վկայագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

7.9.1 Կողմերի համաձայնությամբ,

влияющих на степень страхового риска.

7.4 По желанию Страхователя на страхование могут быть приняты все имеющиеся у Страхователя и членов его семьи объекты страхования или группы объектов страхования либо отдельные объекты страхования.

7.5 Членами семьи признаются супруги, родители, дети и иные предусмотренные законодательством лица, имеющие личные неимущественные и имущественные отношения (совместно проживающие по одному адресу, ведущие общее хозяйство, общий бюджет семьи, совместное питание, общее пользование предметами домашней обстановки и обихода, совместное участие в их приобретении).

7.6 При заключении Договора/Полиса по соглашению Страхователя и Страховщика может быть установлена франшиза – размер ущерба, обязанность за возмещение которого несёт Страхователь. Франшиза может быть условной или безусловной и устанавливаться как в процентах к страховой сумме, так и в абсолютном размере:

7.6.1 при установлении безусловной (вычитаемой) франшизы во всех случаях возмещается ущерб за вычетом суммы франшизы при каждом страховом случае;

7.6.2 при установлении условной (невывчитаемой) франшизы Страховщик не несёт обязательств по возмещению ущерба, не превышающего размер франшизы, но возмещает ущерб полностью, если он превышает размер франшизы.

7.7 Договор/Полис в отношении внутренней отделки и инженерного оборудования строения (квартиры), домашнего или другого имущества по соглашению сторон может быть заключён с условием замены страховой выплаты в денежном выражении предоставлением имущества, аналогичного утраченному имуществу в пределах страховой суммы.

7.8 Договор/Полис прекращает свое действие в случаях:

7.8.1 исполнения Страховщиком обязательств перед Страхователем (Выгодоприобретателем) в полном объёме по Договору/Полису;

7.8.2 если после его вступления в силу возможность наступления страхового случая отпала, и существование страхового риска прекратилось по обстоятельствам иным, чем страховой случай.

7.8.3 ликвидации Страховщика или отзыва у него лицензии;

7.8.4 смерти Страхователя - физического лица; ликвидации Страхователя - юридического лица;

7.8.5 В иных случаях, предусмотренных законодательством РА или Договором/Полисом.

7.9 Договор/Полис может быть расторгнут в следующих случаях:

7.9.1 по соглашению Сторон;



7.9.2 Ապահովադրի նախաձեռնությամբ,
7.9.3 Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի էական խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,
7.9.4 Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի էական խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ,
7.9.5 Պայմանագրով/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

7.10 Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
7.11 Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ):
7.12 Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

7.12.1 Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
7.12.2 Պայմանագրի/Վկայագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:
7.13 Պայմանագիրը/Վկայագիրը սույն Պայմանների 7.11. կետի համաձայն լուծելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:
7.14 Սույն Պայմանների 7.9. կետի 7.9.2. ենթակետով և 7.11. կետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը տվյալ ապահովագրված օբյեկտի գծով լուծելու դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարից նվազեցվում են ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20 (քսան) տոկոսի չափով և ապահովագրական հատուցումների գումարները՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ.

$$ՎԱ = \text{ԸԱ} \cdot \frac{2\text{Ճ} + \text{ԳՃ}}{4\text{Ճ}} - \text{ԸԱ} \cdot 0.2$$

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,
ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի/Վկայագրի,
2Ճ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության չլրացած ժամկետ,
ԳՃ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ:

Սույն Պայմանների 7.9. կետի 7.9.2. ենթակետով սահմանված պայմաններով տվյալ Ապահովագրված անձի գծով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում, եթե Պայմանագրի/Վկայագրի լուծման կամ վաղաժամկետ դադարեցման պահի դրությամբ Ապահովագրողի կողմից իրականացվել է ապահովագրական հատուցում և/կամ Ապահովագրողն ստացել է ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունների գծով

7.9.2 по инициативе Страхователя;
7.9.3 по инициативе Страховщика за существенное нарушение Договора/Полиса Страхователем;
7.9.4 по инициативе Страхователя за существенное нарушение Договора/Полиса Страховщиком;
7.9.5 в других случаях, предусмотренных Договором/Полисом и действующим законодательством РА.
7.10 О намерении расторжения Договора/Полиса стороны обязаны уведомить друг друга не менее за 15 (пятнадцать) дней до предполагаемой даты прекращения Договора/Полиса, если Договором/Полисом не предусмотрено иное.
7.11 Страхователь, являющееся физическим лицом имеет право расторгнуть Договор/Полис в одностороннем порядке без каких-либо объяснений в течение 7 (семи) дней после его заключения (далее по тексту – период обдумывания).
7.12 Период обдумывания не применяется в следующих случаях:
7.12.1 Срок действия Договора/Полиса и/или срок действия страхования, предусмотренного Договором/Полисом не превышает 1 (один) месяц,
7.12.2 в течение 7 (семи) дней, следующих за заключением Договора/Полиса, Страхователь, являющийся физическим лицом, обратился с требованием о получении страхового возмещения.
7.13 В случае досрочного прекращения Договора/Полиса в соответствии с пунктом 7.11. настоящих Правил Договор/Полис считается расторгнутым Страхователем, являющимся физическим лицом, со дня, следующего за днем уведомления об этом Страховщика.
7.14 в случае расторжения Договора/Полиса по данному застрахованному объекту по обстоятельствам, указанным в п.п. 7.9.2. пункта 7.9. и в пункте 7.11. из страховой премии, подлежащей возврату вычитаются расходы, связанные с исполнением обязательств Страховщика по застрахованному объекту в размере 20 (двадцати) процентов и страховые выплаты согласно следующей формуле, если иное не предусмотрено Договором/Полисом:

$$ПВ = \text{ПО} \cdot \frac{\text{СО} + \text{СД}}{4\text{Ճ}} - \text{ПО} \cdot 0.2$$

ПВ – страховая премия, подлежащая возврату;
ПО – общая страховая премия по Договору/Полису;
СО – оставшийся срок действия Договора/Полиса;
СД – срок действия Договора/Полиса.

При расторжении Договора/Полиса по обстоятельствам, указанным в п.п. 7.9.2. пункта 7.9. настоящих Правил, если на момент расторжения или досрочного прекращения Договора/Полиса, Страховщиком были произведены страховые выплаты и/или получены заявления на выплату страхового возмещения по страховым событиям, возврат Страхователю страховой премии за неистекший период страхования не



ապահովագրական հատուցում վճարելու գծով հայտ, ապահովագրության չլրացած ժամկետի համար Ապահովադրին ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.15 Պայմանագիր/Վկայագիրն ապահովագրության օբյեկտներից մեկի գծով դադարեցնելու և մեկ այլ համարժեք ապահովագրության օբյեկտով փոխարինելու դեպքում ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20 (քսան) տոկոսի չափով և ապահովագրական հատուցումների գումարները վերադարձման ենթակա ապահովագրավճարից կարող են չնվազեցվել:

7.16 Սույն Պայմանների 7.9. կետի 7.9.4. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիր/Վկայագիրը լուծելու դեպքում ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը վերադարձման ենթակա ապահովագրավճարից չեն նվազեցվում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.17 Սույն պայմանների 7.9. կետի 7.9.3. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիր/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.18 Պայմանագրի/Վկայագրի լուծման կամ վաղաժամկետ դադարելու դեպքում, երբ նման լուծման կամ վաղաժամկետ դադարման հետևանքները նախատեսված չեն սույն Պայմաններով և/կամ Պայմանագրով/Վկայագրով և/կամ օրենսդրությամբ, Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.19 Այն դեպքում, երբ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է հավասար զրոյին (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):

7.20 Սույն Պայմանների 7.9. կետի 7.9.1. և 7.9.2. ենթակետերով սահմանված պայմաններով Պայմանագիր/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել Պայմանագրի/Վկայագրի դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

7.21 ՀՀ դրամին համարժեք արտարժույթով կնքված Պայմանագիր/Վկայագիրը վաղաժամկետ դադարելու դեպքում Ապահովադրին ապահովագրավճարը վերադարձվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիր/Վկայագիրը վաղաժամկետ դադարեցնելու մասին Ապահովադրի դիմումի ստացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով, որը սակայն դուրս չի գալիս Պայմանագիր/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10 (տասը) տոկոս շեղման սահմաններից:

7.22 Պայմանագիր/Վկայագիրը կնքելիս Ապահովադրի և Ապահովագրողը կարող են համաձայնության գալ՝ լրացուցիչ պայմանների և դրույթների ներառման, որոշակի ռիսկերի

производится, если иное не указано в Договоре/Полисе.

7.15 При прекращении Договора/Полиса по одному из объектов страхования и замене иным аналогичным объектом страхования, расходы, связанные с исполнением обязательств Страховщика по застрахованному объекту в размере 20 (двадцати) процентов и суммы страховых выплат могут не вычитаться из страховой премии, подлежащей возврату.

7.16 При расторжении Договора/Полиса по обстоятельствам, указанным в п.п. 7.9.4. пункта 7.9. настоящих Правил, расходы, связанные с исполнением обязательств Страховщика по застрахованному объекту не вычитаются из страховой премии, подлежащей возврату, если иное не предусмотрено Договором/Полисом.

7.17 При расторжении Договора/Полиса по обстоятельствам, указанным в п.п. 7.9.3. пункта 7.9. настоящих Правил, страховая премия, выплаченная Страхователем Страховщику возврату не подлежит, если иное не предусмотрено Договором/Полисом.

7.18 В случаях расторжения или досрочного прекращения Договора/Полиса, когда последствия такого расторжения или досрочного прекращения не предусмотрены настоящими Правилами, и/или Договором/Полисом и/или законодательством РА, страховая премия, выплаченная Страхователем Страховщику возврату не подлежит, если иное не предусмотрено Договором/Полисом.

7.19 В случае если расчет денежной суммы, подлежащей возврату Страхователю, имеет отрицательное числовое значение, то сумма возврата устанавливается в нулевом значении (возврат страховой премии не производится).

7.20 При расторжении Договора/Полиса по обстоятельствам, указанным в п.п. 7.9.1. и 7.9.2. пункта 7.9. настоящих Правил, могут быть установлены иные принципы расчета страховой премии подлежащей возврату по расторжению или досрочному прекращению Договора/Полиса.

7.21 При досрочном прекращении Договора/Полиса, заключённого в драмовом эквиваленте иностранной валюты, возврат страховой премии Страхователю осуществляется в армянских драмах, если иное не предусмотрено Договором/Полисом, по курсу Центрального банка РА, опубликованному для данной валюты на дату поступления заявления Страхователя о досрочном прекращении Договора/Полиса, но не выходящему за пределы 10 (десяти) процентов отклонения от курса Центрального банка РА на день заключения Договора/Полиса.

7.22 При заключении Договора/Полиса Страхователь и Страховщик могут договориться о внесении дополнительных условий и оговорок, об исключении



բացառման վերաբերյալ, ինչի մասին Պայմանագրում/Վկայագրում կատարվում է համապատասխան նշագրում:

7.23 Մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտը գույքի սեփականատիրոջ մահվան դեպքում նրա օրինական ժառանգները Պայմանագրի/Վկայագրի վերաձևակերպման համար լրացնում են Պայմանագրի/Վկայագրի գծով պարտականություններն ընդունելու մասին դիմում: Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում այդպիսի պայմանագրով ապահովագրական հատուցում իրականացնելու Ապահովագրողի պարտավորությունը ծագում է միայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը ներկայացնելուց հետո:

Շինությունների (բնակարանների) ապահովագրության առանձնահատկությունները

7.24 Շինությունների (բնակարանի), շինությունների (բնակարանի) ներքին հարդարանքի, սարքավորումների Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել հետևյալ պայմաններով`

7.24.1 գույքի վնասման դեպքում ապահովագրության օբյեկտի վերականգնման (վերանորոգման) ուղղված ծախսերի փոխհատուցման` «հաշվի առնելով մաշվածությունը» (շահագործման ժամկետի ընթացքում),

7.24.2 գույքի վնասման դեպքում ապահովագրության օբյեկտի վերականգնման (վերանորոգման) ուղղված ծախսերի փոխհատուցման` «առանց հաշվի առնելու մաշվածությունը» (շահագործման ժամկետի ընթացքում):

7.25 Շինությունները, այդ թվում` տնտեսական կամ այլ նշանակության կառույցները, համարվում են ապահովագրված Պայմանագրում/Վկայագրում նշված հասցեում (տարածքում) գտնվող հողակտորի վրա: Բնակարանները համարվում են ապահովագրված Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում):

7.26 Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը փոքր է ապահովագրության օբյեկտի իրական (ապահովագրական) արժեքից, ապա շինությունների (բնակարանի), ներքին հարդարանքի, սարքավորումների Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է կնքված «համամասնական» հատուցման պայմանով, այսինքն` շինության (բնակարանի) վնասման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն: Կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել «առաջին դիսկի» ապահովագրական փոխհատուցման պայմանով, այսինքն` շինության (բնակարանի) վնասման դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է վնասի չափով, սակայն ապահովագրական գումարի սահմաններում: Այսինքն` սահմանվում է հատուցման առավելագույն գումար և այն դեպքում, երբ վնասի չափը գերազանցում է սահմանված հատուցման առավելագույն գումարը, տվյալ գումարը գերազանցող մասը չի հատուցվում:

Տնային և/կամ այլ գույքի ապահովագրության առանձնահատկությունները

каких-либо рисков, о чём производится соответствующая запись в Договоре/Полисе.

7.23 В случае смерти собственника имущества до окончания срока действия Договора/Полиса законные наследники для переоформления Договора/Полиса заполняют заявление о принятии обязательств по Договору/Полису. В случае наступления страхового случая, обязанность Страховщика по осуществлению страховой выплаты по такому договору наступает только после предъявления документа о праве собственности.

Особенности страхования строений (квартир)

7.24 Договор/Полис строений (квартиры), внутренней отделки, оборудования строений (квартиры) может быть заключён с условиями:

7.24.1 возмещения расходов по восстановлению (ремонт) объекта страхования при повреждении имущества "с учётом износа" (за срок эксплуатации);

7.24.2 возмещения расходов по восстановлению (ремонт) объекта страхования при повреждении имущества "без учёта износа" (за срок эксплуатации).

7.25 Строения, в том числе постройки хозяйственного и иного назначения, считаются застрахованными на земельном участке по адресу (территории) страхования, указанному в Договоре/Полисе. Квартиры считаются застрахованными по адресу (территории) страхования, указанному в Договоре/Полисе.

7.26 Если страховая сумма, установленная в Договоре/Полисе, ниже действительной (страховой) стоимости объекта страхования, то Договор/Полис строений (квартиры), внутренней отделки, оборудования считается заключённым с условием выплаты "по пропорции", то есть страховая выплата при повреждении строения (квартиры) рассчитывается пропорционально отношению страховой суммы к действительной (страховой) стоимости. По соглашению сторон Договор/Полис может быть заключен с условием выплаты страхового возмещения "по первому риску", то есть страховая выплата при повреждении строения (квартиры) рассчитывается в размере ущерба, но в пределах страховой суммы. То есть, устанавливается максимальная сумма возмещения и в случае, если величина ущерба превышает максимальную сумму установленного возмещения, часть, превышающая эту сумму, не возмещается.

Особенности страхования домашнего и/или другого имущества



7.27 Կախված նշանակությունից և ապահովագրական գումարի չափից, տնային և/կամ այլ գույքը կարող է ապահովագրվել «ընդհանուր» և/կամ «հատուկ» Պայմանագրի/Վկայագրի պայմաններով:

7.28 Տնային գույքի «ընդհանուր» Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության օբյեկտները կարող են ապահովագրվել՝

7.28.1 ընդհանուր ապահովագրական գումարով՝ առանց ապահովագրության օբյեկտները խմբերի բաշխելու,

7.28.2 ապահովագրական գումարը ապահովագրության օբյեկտների խմբերին բաշխելով: Պայմանագրի/Վկայագրի կնքվում է բոլոր կամ առանձին ապահովագրական ռիսկերի գծով պատասխանատվությամբ (տյուն Պայմաններում նշված ապահովագրության Տարբերակներով):

7.29 «Ընդհանուր» Պայմանագրի/Վկայագրի կարող է կնքվել ապահովագրության օբյեկտների գույքագրմամբ կամ առանց գույքագրման: Ապահովագրության օբյեկտների գույքագրումը կարող է կատարվել ըստ յուրաքանչյուր առարկայի, ըստ ապահովագրության օբյեկտների խմբերի կամ ըստ ապահովագրության օբյեկտների խմբերի՝ առանձին առարկաների գույքագրմամբ:

7.30 Տնային գույքը և/կամ այլ գույքը համարվում է ապահովագրված՝

7.30.1 Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում) գտնվող շինությունում (բնակարանում) և տնտեսական կառույցներում: Ընդ որում՝ Ապահովագրի (Շահառուի) օժանդակ կառույց հանդիսացող ցախատանր, նկուղում կամ բնակարանի այլ կցակառույցում գտնվող գույքը չի համարվում ապահովագրված բնակարանի գույքի Պայմանագրով/Վկայագրով,

7.30.2 Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրության այլ հասցեում (տարածքում):

7.31 «Հատուկ» Պայմանագրի/Վկայագրի կնքվում է ապահովագրության օբյեկտների պարտադիր զննմամբ և գույքագրմամբ՝ անկախ ապահովագրական գումարի չափից: Գույքագրման ցուցակում յուրաքանչյուր ապահովագրական օբյեկտի համար առանձին նշվում են լրիվ անվանումը, հիմնական բնութագրի, ապահովագրական գումարը:

7.32 «Հատուկ» Պայմանագրի/Վկայագրի պայմաններով ապահովագրման ենթակա են՝

7.32.1 տնային և/կամ այլ գույքը՝ ժամանակավոր գտնվելու (պահպանվելու) վայրում՝ գործողման, հանգստի վայրում, ցուցահանդեսում, Ապահովագրի (Շահառուի) գտնվելու վայրում և այլն,

7.32.2 տնային և/կամ այլ գույքը, որը գտնվում է պատասխանատու պահպանության տակ, գրավի տակ և այլն:

7.33 Ապահովագրի և Ապահովագրողի համաձայնությամբ ապահովագրության օբյեկտները կամ ապահովագրության օբյեկտների խմբերը, որոնք ապահովագրվել են «ընդհանուր» Պայմանագրով/Վկայագրով, կարող են ապահովագրվել «հատուկ» Պայմանագրով/Վկայագրով:

7.34 «Հատուկ» Պայմանագրի/Վկայագրի պայմաններով կողմերի համաձայնությամբ կարող է ապահովագրվել հողակտորի վրա (շինությունից դուրս) գտնվող այլ գույք. շինության (բնակարանի), բաղնիքի, ավտոտնակի և այլնի շինարարության (վերանորոգման) համար նախատեսված շինարարական նյութեր, լանդշաֆտային ձարտարապետության տարրերի

7.27 В зависимости от назначения, размера страховой суммы домашнее и/или другое имущество может быть застраховано на условиях "общего" и/или "специального" Договора/Полиса.

7.28 По "общему" Договору/Полису домашнего имущества объекты страхования могут быть застрахованы:

7.28.1 в общей страховой сумме без разбивки по группам объектов страхования;

7.28.2 с разбивкой страховой суммы по группам объектов страхования. Договор/Полис заключается с ответственностью по всем или отдельным страховым рискам (Вариантам страхования, указанным в настоящих Правилах).

7.29 "Общий" Договор/Полис может быть заключен с описью или без описи объектов страхования. Опись объектов страхования может быть составлена попредметно, по группам объектов страхования или по группам объектов страхования с описью отдельных предметов.

7.30 Домашнее имущество и/или другое имущество считается застрахованным:

7.30.1 в строениях (квартире) и хозяйственных постройках, расположенных по адресу (территории) страхования, указанному в Договоре/Полисе. При этом имущество Страхователя (Выгодоприобретателя), находящееся в сарае, подвале или другой постройке, выделенной в качестве подсобного помещения к квартире, не считается застрахованным по Договору/Полису имущества в квартире;

7.30.2 по иному адресу (территории) страхования, обозначенному в Договоре/Полисе.

7.31 "Специальный" Договор/Полис заключается с обязательным осмотром и описью объектов страхования независимо от размера страховой суммы. В описи указывается отдельно по каждому объекту страхования: полное наименование, основная характеристика, страховая сумма.

7.32 На условиях "специального" Договора/Полиса подлежит страхованию:

7.32.1 домашнее и/или другое имущество по временному месту нахождения (хранения) – в командировке, на отдыхе, на выставке, по месту нахождения Страхователя (Выгодоприобретателя) и т. д.;

7.32.2 домашнее и/или другое имущество, находящееся на ответственном хранении, в залоге и т.д.

7.33 По согласованию Страхователя и Страховщика объекты страхования или группы объектов страхования, принятые на страхование по "общему" Договору/Полису, могут быть застрахованы по "специальному" Договору/Полису.

7.34 На условиях "специального" Договора/Полиса по соглашению сторон может быть застраховано на земельном участке (вне помещения) другое имущество: строительные материалы, предназначенные для строительства (ремонта) строения (квартиры), бани, гаража и т.п.; набор элементов ландшафтной архитектуры,



հավաքածուներ, փոքր ճարտարապետական կաղապարներ, Ապահովադրի (Շահառուի) համար հատուկ արժեք ներկայացնող այլ գույք:

7.35 Եթե տնային և/կամ այլ գույքը դուրս են բերվում Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության հասցեում (տարածքում) գտնվող շինությունից (բնակարանից) և տնտեսական կառույցներից, ապա այդ գույքի մասով ապահովագրական ծածկույթը չի գործում մինչև նշված գույքը ապահովագրության տարածք վերադարձնելը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.36 Ապահովագրության օբյեկտները, որոնք ժամանակավորապես թողնվել են Ապահովադրի (Շահառուի) և/կամ նրա ընտանիքի անդամի կողմից ապահովագրության տարածքում առանց հսկողության անընդմեջ 30 (երեսուն) օրացուցային օրից ավելի ժամկետով, համարվում են ապահովագրված միայն հրդեհի, ներառյալ՝ այրման նյութերի, ինչպես նաև ջրի (փրփուրի) և հրդեհի մարման ընթացքում կիրառված այլ միջոցների ազդեցության, կայծակնահարման, որը չի հանգեցրել հրդեհ, պայթյունի, երկրաշարժի (եթե Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ), տրանսպորտային միջոցների վրաերթի և/կամ կենդանու հետ բախման, ապահովագրության օբյեկտի վրա ծառերի, թռչող սարքերի, դրանց մասերի կամ բեռի վայր ընկնելու ռիսկերից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովագրողը պարտավոր է.

8.1.1 Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին, բացատրել Պայմանագիր/Վկայագիր կնքելու կարգը, Ապահովադրին տրամադրել Պայմանները, Պայմանագիր/Վկայագիրը,

8.1.2 հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին,

8.1.3 ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում, իսկ հատուցումը մերժելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքել Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության վայրի հասցեով,

8.1.4 չհրապարակել Ապահովադրի, Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.2 Ապահովագրողն իրավունք ունի.

8.2.1 ստուգելու ապահովագրության օբյեկտի վիճակը, ապահովագրության օբյեկտի մասին Ապահովադրի կողմից

малые архитектурные формы; другое имущество, особо ценное для Страхователя (Выгодоприобретателя).

7.35 Если домашнее и/или другое имущество вывозят из строения (квартиры) и хозяйственных построек, расположенных по адресу (территории), указанному в Договоре/Полисе, то страховое покрытие по данному имуществу не действует до возвращения данного имущества на территорию страхования, если иное не предусмотрено Договором/Полисом.

7.36 Объекты страхования, временно оставленные без присмотра Страхователем (Выгодоприобретателем) и/или членом его семьи на территории страхования более чем на 30 (тридцать) календарных дней, считаются застрахованными только по следующим рискам: пожар, включая воздействие продуктами сгорания, а также водой (пенной) и другими средствами, использованными при пожаротушении; удар молнии, не повлекший возникновения пожара; землетрясение (при наличии специальной записи в Договоре/Полисе, касающейся страхования данного риска); наезд транспортных средств и/или столкновение с животным; падение на объект страхования деревьев; летательных аппаратов, их частей или груза, если иное не предусмотрено Договором/Полисом.

8. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН ДОГОВОРА/ПОЛИСА

8.1 Страховщик обязан:

8.1.1 ознакомить Страхователя с настоящими Правилами при заключении Договора/Полиса, разъяснить порядок заключения Договора/Полиса, выдать Страхователю Правила, Договор/Полис;

8.1.2 после получения всех необходимых документов для урегулирования убытка в течение 5 (пяти) рабочих дней принять решение о признании или непризнании события, имеющего признаки страхового случая, страховым случаем и о страховой выплате или отказе в страховой выплате;

8.1.3 в случае принятия решения о признании события, имеющего признаки страхового случая, страховым случаем, в течение 5 (пяти) рабочих дней после дня принятия соответствующего решения произвести страховую выплату, а в случае отказа в страховой выплате отправить заказное письмо с уведомлением о принятом обоснованном решении на адрес постоянного проживания Страхователя (Выгодоприобретателя) в течение 5 (пяти) календарных дней;

8.1.4 не разглашать сведения о Страхователе, Застрахованном лице, Выгодоприобретателе, их имущественном положении, за исключением случаев, предусмотренных законодательством РА.

8.2 Страховщик имеет право:

8.2.1 проверять состояние объекта страхования, соответствие сообщённых Страхователем сведений об



հայտնած տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին, ապահովագրության օբյեկտի պահպանման և շահագործման նորմերի և կանոնների, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում դրա պայմանների պահպանումը,

8.2.2 պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխում և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կնքված Պայմանագրի/Վկայագրի պայմանները փոփոխող հանգամանքների և այնպիսի գործոնների առկայության դեպքում, որոնք կարող են էապես ազդել ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի ռիսկի աստիճանի բարձրացման վրա (այդ թվում՝ շենքերի, շինությունների վերնորոգում, վերակառուցում, հակաառևանգային համակարգի անսարքություն, ապահովագրության տարածքի բանալիների կորուստ և/կամ փականների, բանալիների վնասում): Փոփոխում կատարելու Ապահովագրողի մտադրության, ինչպես նաև Ապահովադրի՝ փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Պայմանագրի/Վկայագրի անմիջապես լուծելու Ապահովադրի իրավունքի մասին Ապահովագրողը պարտավոր է նախապես ծանուցել նրան: Եթե Ապահովադրի (Շահառուն) առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լուծել Պայմանագրի/Վկայագրի և հատուցելու Պայմանագրի/Վկայագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները,

